ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Շիրակի մարզի « Ախուրյանի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի պատմություն (9 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:
Մրցույթն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1), մեկ լուսանկար (3 x 4) չափի
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)
- Հայ եկեղեցու պատմություն առարկայի համար վերապատրաստման վկայագիր
- անձը հաստատող փաստաթուղթ
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)
- ինքնակենսագրություն (Ձև 5)
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝ նոյեմբերի 29-ից մինչև դեկտեմբերի 12 -ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:
Մրցույթը տեղի կունենա դեկտեմբերի 19-ին՝ ժամը 14:00-ին ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի թիվ 1 հիմնական դպրոցում, հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ գ. Ախուրյան , Գյումրու խճ 16

ըստ հետևյալ ժամանակացույցի:
Տեղեկությունների համար զանգահարել /098181229/ հեռախոսահամարով: